


Ա. Դ. ԶԵԽՈՎ

# ՏՂԱՐԵՐԸ

ՊԵՏՀՐԱՆ 1937  
ՅԵՐԵՎԱՆ



Ա. ԶԵԽՈՎ

# Տ Ա Ն Ե Ր Ը

Թարգմ. Հ. Ա.Վ.Ա.ԳՅԱՆ

Նկարները Պ. Ա.Լ.ՅԱ.ԿՐԻՆՍԿՈՒ

A 24138-7093

Հի Անդ Անդ.



ՊԵՏՎՐԱԾ

ՀԱՅԵՐ ԿԿ ԿԿ ՄԱՆԿԱ-ԳԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲՈԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ


1937



ՓՈՔՐԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ ██████████  
Տեխ. խմբագիր՝ Ա. ԽոհՉԱՂԱՎԵՐԻՔՅԱՆ  
Մրցագրիչ՝ Ա. ՆԵԱՆՑԱՆ

Գլավիթի լիսազար Կ—4465, հրամ. 3878  
Պատվեր 1133, տրամ 3000  
Պետրասի տպարան, Ցերեվան, Ա Կունյանցի, 4



— Վոլոգյան ճեկավ. — բղավեց մեկը բակում.  
 — Վոլոգիշկան յեկավ, — բացականչեց Նատալյան, ներս վազելով սեղանատուն: — Ախ, աստված իմ:  
 Կարալյովների ամբողջ ընտանիքը, վորը ժամ  
 առ ժամ սպասում եր Վոլոգյային, նետվեց դեպի  
 լուսամուտները: Գլխավոր մուտքի առաջ կանգ-  
 նած եր մի լայն սահնակ, և յերեք սպիտակ ձիե-  
 րից թանձր գոլորշի յեր բարձրանում: Սահնակը գա-  
 տարկ եր, գորովհետև վոլոգյան արգեն կանգնած  
 եր նախասենյակում և կարմրած, մըսած ձեռքերով  
 արձակում եր գլխանոցը: Նրա գիմնազիական վե-  
 րաըկուն, գլխարկը, կրկնակոշիկներն ու քունքի մա-  
 զերը ծածկված եյին յեղյամով, և նա ամբողջովին  
 գլխից մինչև վոտք այնպիսի մի գուրեկան սառնա-  
 մանիքային հոտ երարձակում, փոր, նրան նայելով  
 ուզում եյիր մըսել և ասել՝ «բը՛ռ-ռ-ռ»: Մայրն ու  
 մորաքույրն շտապեցին գրկել ու համբուրել նրան,  
 Նատալյան ընկավ նրա վոտքերն ու սկսեց հանել  
 թաղյակները, քույրերը ճշոց բարձրացրին, դռները

Ճռճռում եյին, թըրխկում, իսկ Վոլոդյայի հայրը  
ժիկտով ու մկրատը ձեռքին ներս վազեց նախա-  
սենյակ ու բացականչեց վախեցած՝

— Իսկ մենք քեզ դեռ յերեկ եյինք սպասում։  
Լավ տեղ հասար, Բարեհաջնող։ Տեր աստված իմ,  
ախըր թողեք մի հոր հետ վողջագուրվի։ Ի՞նչ ե, չը-  
լինի թե յես դրա հայրը չեմ։

— Հափ, հափ, — թափ ձայնով հաջում եր Մի-  
լորդը՝ հսկայական շունը, թխկթխկացնելով պոշը  
պատերին ու կահկարասիքին։

Սմեն ինչ միացել, դառել եր մի միասնական  
համատարած, բերկրալից հնչյուն, վոր տեսք մոտ  
յերկու րոպե։ Յերբ ուրախության առաջին թա-  
փըն անցավ, կարալյովսերը նկատեցին, վոր բացի  
Վոլոդյայից նախասենյակում գտնվում եր նաև մի  
փոքրիկ մարդ, փաթաթված թաշկինակներով, շա-  
լերով ու գլխանոցով և ծածկված յեղյամով։ Նա  
անշարժ կանգնած եր անկյունում աղվեսի մեծ  
քուրքից ընկնող շվաքի մեջ։

— Վոլոդիչկա, իսկ դա ով ե, — հարցրեց շշնջա-  
լով մայրը։

— Վահ, — գլխի ընկավ Վոլոդյան։ — Դա, պատիվ  
ունիմ ներկայացնելու, իմ ընկեր Զեչեկիցինն ե,  
յերկրորդ գասարանի աշակերտ... Յես նրան բերել  
եմ մեզ մոտ հյուր։

— Շատ ուրախ ենք, շնորհ արեք, — ասաց ուրա-  
խացած հայրը։ — Ներեցեք, յես տնավաթի, առանց  
սերթուկի յեմ... Խնդրեմ համեցեք։ Նատալյա, ոգ-  
նիր պարոն Զեչեկիցինն հանվելու։ Տեր աստված  
իմ, դե մի քշեք եղ շանը։ Դա պատիժ ե։

Մի քիչ հետո Վոլոդյան ու նրա բարեկամ Զե-  
չեկիցինը, աղմկոտ հանդիպումից շմած ու ցրտից



Գլխավոր մուտքի առաջ՝ կանգնած եր մի լայն սահնող:

դեռևս վարդագույն, նստած եյին սեղանի մոտ ու  
թեյ եյին խմում.

Զմեռային արեգակը, թափանցելով լուսամուտ-  
ների վրայի ձյան ու նախշերի միջով, գողգո-  
ղում եր ինքնայեռի վրա ու լողացնում եր մա-  
քուր ճառագայթները թեյի վողողաթասում։ Սեն-  
յակում տաք եր, և տղաներն զգում եյին, թե ինչ-  
պես նրանց մրսած մարմիններում, չցանկանալով  
տեղի տալ իրար, խտղտվում եյին տաքությունն-  
ու ցուրտը։

— Ահա շուտով և ջրորհնեքն եւ — ասում եր ձիգ  
տալով հայրը, մութ շիկագույն ծխախոտից գլանակ  
վոլորելով։ — Իսկ վաղուց եր, վոր ամմառ եր, և մայ-  
րը լաց եր լինում քեզ ճամփու դնելիս։ Ըհը՛, տե-  
սար հրես դու ել յեկար... ժամանակն, ախպերս,  
արագ ե անցնում։ Պարոն Զիբիսով, համեցեր,  
շատ եմ խնդրում, մի քաշվեր։ Մեզ մոտ պարզ պի-  
տի լինել։

Վոլոդյայի յերեք քույրերը՝ Կատյան, Սոնյան  
և Մաշան — նրանցից աւենից մեծը տասնմեկ տա-  
րեկան եր — նստած եյին սեղանի մոտ և աշքները  
շեյին պոկում նոր ծանոթից։ Զեշեկոյինը նույն  
տարիքին ու հասակին եր, ինչ վոր Վոլոդյան, բայց  
այդքան թխիկ, ու սպիտակ յեր, այլ նիհար եր,  
թուխ, ծածկված պեպեններով։ Նրա մազերը կոշտ և  
զցված եյին, աշքերը նեղլիկ, շրթունքները հաստ,  
ընդհանարապես նա շատ տգեղ եր, և յեթե նրա  
հագին զիմնազիական կուրտկա չլիներ, ապա նա  
իր արտաքինով նման կլիներ խոհարարուհու տը-  
ղայի։ Նա մոայլ եր, միշտ լուռ և վոչ մի անգամ  
չժպտաց։ Աղջկերքը, նայելով նրան, իսկույն գլխի  
ընկան, վոր դա, յերեի, շատ խելոք և զիտուն մարդ  
ե։ Նա անընդհատ մտածում եր ինչ վոր բանի մա-



—Հազ, հազ, —թագ ձայնով հաջում եր Միլորդ:

սին և այնպես եր զբաղված իր մտքերով, վոր յերբ  
նրան հարցնում եյին վորեւ բանի մասին, նա  
ցնցվում եր, թափ եր տալիս գլուխն ու խըն-  
դրում կրկնել հարցը:

Աղջկերքը նկատեցին, վոր միշտ ուրախ ու ա-  
սող-խոսող Վոլոգյան ել, այս անգամին խոսում  
եր քիչ, բոլորովին չեր ժպտում և կարծես նույն-  
իսկ ուրախ չեր, վոր յեկել եր տուն: Քանի գեռ  
նստած եյին թեյի, նա դիմեց իր քույրերին միայն  
մեկ անգամ, և այն ել ինչ վոր տարորինակ խոսքե-  
րով: Նա ցույց տվեց մատով ինքնայեռն ու առաց  
— իսկ Կալիֆորնիայում թեյի փոխարեն խմում  
են ջին:

Նա ել եր զբաղված ինչ վոր մտքերով, և այն  
հայացքները, վոր յերբեմն նա փոխանակում եր  
իր բարեկամ Զեչեիցյինի հետ, յեղբակացնել եր  
տալիս, վոր տղաների մտքերն ընդհանուր եյին:

Թեյից հետո բոլորն անցան փոքրերի սենյակը  
Հայրն ու աղջկերքը նստեցին սեղանի մոտ ու ըգ-  
բաղվեցին գործով, վորն ընդհատվել եր տղաների  
գալով: Նրանք գույնգույն թղթից շինում եյին  
ծաղիկներ ու ծոյափոր ժապավեններ տոնածառի  
համար: Դա գրավիչ ու աղմկալի աշխատանք եր:  
Սմեն մի նոր շինած ծաղիկն աղջկերքը դիմավո-  
րում եյին խանդավառ բացականչություններով,  
նույնիսկ սարսափի ձայներով, կարծես այդ ծա-  
ղիկն ընկնում եր յերկնքից: Հայրիկը նույնպես  
սրանցանում եր և յերբեմն գցում եր մկրատը գե-  
տին, բարկանալով նրա վրա, վոր նա բութ ե:

Մայրը ներս եր վազում փոքրերի սենյակը  
սաստիկ մտահոգված գեմքով ու հարցնում՝

— Ո՞վ ե վերցրել իմ մկրատը: Ելի Իվան Նի-  
կալայեից, գու յես վերցրել իմ մկրատը:



— Իսկ Կալիֆորնիայում թելի վախարեն խմում են ջին:

— Տեր աստված իմ, նույնիսկ մկրատը չեն  
տալիս, — պատասխանում եր լալկան ձայնով Իվան  
Նիկալայնիչն ու յետ ընկնելով աթոռի մեջքին, վի-  
րավորված մարդու դիրք եր ընդունում, բայց սի  
րոպե անցած նորից սքանչանում եր:

Իր նախընթաց այցելությունների ժամանակ  
Վոլոգյան նույնպես զբաղվում եր տոնածառի պատ-  
րաստություններով, կամ վազ եր տալիս բակը նա-  
յելու, թե կառապանն ու հոգիվն ինչպես են ձնե  
սար շինում, բայց հիմա նա ու Զեշնիցյինը վոչ  
մի ուշադրություն չդարձրին գույնզգույն թղթի  
վրա և նույնիսկ վոչ մի անգամ չեղան ախոռում,  
այլ նստեցին լուսամուտի մոտ ու սկսեցին շնչալ  
ինչ վոր բանի մասին: Հետո նրանք միասին բաց  
արին աշխարհագրական ատլասն ու սկսեցին նայել  
ինչ վոր մի քարտեզ:

— Սկզբից Պերմ... — կամաց ասում եր Զեշնի-  
ցյինը... Ենտեղից Տյումեն... հետո Տոմսկ... հետո...  
հետո... Կամչատկա... Եստեղից սամոյեդները կանց-  
կացնեն նավակներով Բերինգյան նեղուցից... Ահա  
քեզ և Ոմերիկան... Եստեղ շատ մուշտակավոր գա-  
զաններ կան:

— Իսկ Կալիֆորնիան, — հարցրեց Վոլոգյան:

— Կալիֆորնիան ներքեն ե... հերիք ե վոր Ա-  
մերիկա ընկնենք, Կալիֆորնիա հասնելը հեշտ ե,  
իսկ մեզ համար սնունդ կարող ենք ճարել վոր-  
սորդությամբ ու կողոպուտով:

Զեշնիցյինն ամբողջ որն իրեն հեռու եր պահում  
աղջկերքից և հոնքերի տակից եր նայում նրանց:  
Յերեկոյան թեյից, հետո այնպես պատահեց, վոր  
նրան մի հինգ լոպեյով թողին մենակ աղջը-  
կերքի հետ: Անհարմար եր լուռ մնալ նա խստո-



— Ակզեից Պերմ... — կամաց ասում ել : Զեչեիցինը :

բեն հազաց, աջ ափով շփեց ձախ ձեռքը, մռայլ նա-  
յեց կատյային ու հարցրեց՝

— Դուք կարդացել եք Մայն-Իթղին:

— Վոչ, չեմ կարդացել... Լսեցեք, դուք կարո-  
ղանում եք չմուշկներով սահեր:

Ընկղմված իր մտքերի մեջ, Զեշէիցյինը վո-  
շինչ չպատասխանեց այդ հարցին, այլ միայն սաս-  
տիկ ուղղրեց այտեղն ու այնպիսի հոգոց հանեց,  
կարծես թե սաստիկ շոգում եր: Նա նորից աչքերն  
ուղղեց կատյային ու սասաց՝

— Յերբ բիզոնների հոտը վազում ե պամպաս-  
ներով, դողում ե գետինը, իսկ այդ ժամանակ մուս-  
տանգները, վախեցած, քացի յեն գցում ու խրխըն-  
ջում են:

Զեշէիցյինը տխուը ժպտաց ու ավելացրեց՝

— Նաև հողկացիները հարձակվում են գնացը-  
ների վրա: Բայց ամենից վատը, մոսկիտներն են  
ու տերմիտները:

— Իսկ դրանք ի՞նչ են:

— Դրանք մըջնիկների նման բան են, միայն  
թևեր ունեն: Շատ պինդ կծում են: Գիտե՞ք յես ովեմ:

— Պարոն Զեշէիցյինը:

— Վոչ: Յես Մոնտիգումո Բաղեյի ձիրանն եմ,  
անհաղթելիների առաջնորդը:

Մաշան, բոլորից փոքր աղջիկը, նայեց նրան,  
հետո լուսամուտին, վորի յետեռում արդեն յերեկո  
յեր, և սասաց մտադրաղ՝

— Իսկ մենք յերեկ վոսպ եյինք յեփել:

Զեշէիցյինի բոլորովին անհասկանալի խոսքերը  
և այն, վորնա անընդհատ վսփսում եր Վոլոդյայի-  
հետ, և այն, վոր Վոլոդյան շեր խաղում, այլ միայն  
մտածում ինչ վոր բանի մասին, — այդ բոլորը խոր-

հըրդավոր եր ու տարրորինակ: Յեվ յերկու մեծ աղ-  
ջըկերքը, կատյան ու Սոնյան, սկսեցին ուշադրու-  
թյամբ հետեւ տղաներին: Յերեկոյան, յերր տղա-  
ները պառկում եյին քնելու, աղջկերքը գաղտնաբար  
մոտեցան գոանն ու լսեցին նրանց խոսակցությու-  
նը: Ո՞, ինչեր իմացան նրանք: Ծղաները պատրաստ-  
վում եյին փախելու ինչ վոր Ամերիկա, վոսկի ձեռ  
գցելու: Ամեն ինչ արդեն պատրաստ եր ճանապար-  
հի համար՝ ատրճանակ, յերկու դանակ, չոր հաց,  
խոշորացույց — կրակ ստանալու համար, կողմա-  
ցույց և չորս ոռոբլի փող: Նրանք իմացան, վոր  
տղաներն ստիպված պիտի լինեն անցնելու մի քանի-  
հազար վերստ, իսկ ճանապարհին կովելու են փագ-  
րերի ու փայրենիների հետ, Հետո վոսկի և փղոսկր  
պիտի հանեն, թշնամիներ սպանեն, դառնան ծո-  
վային ավազակներ, իսմեն ջին և վերջի վերջո ա-  
մուսնանան գեղեցկուհիների հետ ու մշակեն պլան-  
տացիաներ: Վոլոդյան ու Զեչնիցյինը խոսում եյին  
ու տարվելով իրար ընդհատում: Այդուղի Զեչնի-  
ցյինն իրեն անվանում եր այսպես՝ «Մոնտիգոմ-  
բագեյի ձիրան», իսկ Վոլոդյան — «իմ սպիտակա-  
մորթ յեղբայր»:

— Տես հա, մայրիկին մի ասա, — ասաց Կատ-  
յան Սոնյային, յերր գնում եյին քնելու: — Վոլո-  
դյան Այերիկայից կրերի մեզ համար վոսկի և փր-  
ղոսկր, իսկ յեթե գու ասես, նրան չեն թողնի:  
Զըորհնեքի նախընթաց որը Զեչնիցյինն ամբողջ  
ժամանակ նայում եր Սսիայի քարտեզն ու ինչ  
վոր բան գրի առնում, իսկ Վոլոդյան, հոգնատանջ,  
թխլիկ, կարծես մեղու կծած լիներ, մոայլ ման  
եր գալիս սենյակներում և վոչինչ չեր ուտում: Յեվ

նույնիսկ մեկ անգամ մանկանոցում նա կանգ առաջ սրբապատկերի առաջ, խաչակնքեց յերեսն ու ասաց՝

— Տեր իմ, ներիր ինձ մեղավորիս: Տեր իմ, պահիր իմ խեղճ, թշվառ մայրիկին:

Յերեկոյան դեմ նա լաց յեղավ: Յերբ գնում եր քնելու, նա յերկար գրկում եր հորը, մորն ու քույրերին: Կատյան ու Սոնյան հասկանում ելին բանն ինչումն ե, իսկ փոքրը, Մաշան, վոշինչ չեր հաւկանում, բացարձակորեն վոշինչ, և միայն յերբ նայում եր Զեչեիցյինին, մտածմունքի մեջ եր ընկնում և ասում հոգոց հանելով՝

— Յերբ պասր գալիս ե, դայակս ասում ե պետք ե ուտել սիսեռ և վոսպ:

Ջրորհնեքի առավոտյան կանուխ կատյան ու Սոնյան կամաց վեր կացան անկողնուց և գնացին նայելու, թե ինչպես պիտի տղաները փախչեցին Ծմերիկա: Ծածուկ մոտեցան դռանը:

— Ուրեմն դու չես գնալու, — բարկացած հարցընում եր Զեչեիցյինը: — Ասա, չես գա:

— Տեր Աստված, — կամաց լաց եր լինում Վոլոդյան: — Բա յես վժնց գնամ, յես մայրիկիս եմ խղճում:


— Իմ սպիտակամորթ յեղբայր, յես քեզ խընդրում եմ, գնանք: Դու ինքդ եյիր հավատացնում, վոր կգնաս, ինքդ ինձ խաթեցիր բերեցիր, իսկ հենց գնալու ժամանակն յեկավ, փախեցար:

— Յես... Յես չեմ վախենում, այլ յես... յես մայրիկիս եմ խղճում:

— Դու առա՝ կգնաս, թե չե:

— Յես կգնամ, միայն... միայն սպասիր: Յես ուզում եմ տանը մի քիչ ապրել:

— Վոր եղածս ե յես ինքս կգնամ, — վորոշեց



Ո՛, լուչեր իմացան նըանք:

Զեշեիցյինը: — Առանց քեզ ել յոլա կգնամ: Բաս,  
դեռ ուզում եյիր վագրերի դեմ փորսի գնալ, կոփի  
անել: Վոր եղաբես ե տուր ինձ իմ պատիճները:

Վոլոդյան այնպես դառը լաց յեղավ, վոր քույ-  
րերը չդիմ ացան ու նույնպես կամ ացուկ լաց յե-  
ղան: Լուռթյուն տիրեց:

— Ուրեմն դու չե՞ս գա, — մի անգամ ել հարց-  
րեց Զեշեիցյինը:

— Կր... կգամ:

— Դե հագնվի՞ր:

Յեվ Զեշեիցյինը, վորպեսզի Վոլոդյային հա-  
մողի, գովում եր Ամերիկան, մոնչում վագրի նը-  
ման, պատկերացնում շոգենավը, հայոցյում եր,  
խոստացավ տալ Վոլոդյային ամբողջ փղոսկը և  
բոլոր առյուծի ու վագրի մորթիները:

Յեվ այդ լղարիկ, թուխ, կոշտամազ ու պեպե-  
նոտ տղան աղջկերքին թվում եր արտասովոր, նր-  
շանավոր: Դա հերոս եր, վճռական, անվախ մի մարդ  
և մոնչում եր նա այնպես, վոր դռան յետկը կանգ-  
նած, իսկապես կարելի յեր կարծել, վոր դա վա-  
գըր ե, կամ առյուծ:

Յերբ աղջկերքը վերադարձան իրենց սենյակ ու  
հագնվում եյին, կատյան, աչքերն արտասունքով  
լիքը, ասաց՝

— Ախ, ինչպես սարսափելի յե:

Մինչև ժամը յերկուսը, յերբ նստեցին ճաշի,  
ամեն ինչ հանգիստ եր, բայց ճաշին բանից դուրս  
յեկավ, վոր տղաները տանը չեն: Աւղարկեցին ծա-  
ռաների սենյակը, ախոռը, կողաշենքը — գործակա-  
տպը մոտ — այդտեղ նրանք չկային: Աւղարկեցին  
գյուղ — այնտեղ ել չգտան: Թեյն ել հետո նույնպես  
խմեցին առանց աղաների, իսկ յերբ նստում եյին

Քնթրելու, մայրիկը շատ եր անհանգստանում, նույն իսկ լաց եր լինում։ Իսկ գիշերը նորից գնացին գյուղ, վնասուեցին, ման յեկան լապտերներով գետի մոտ։

Սպաված իմ, ինչպիսի իրարանցում բարձրացավ։

Մյուս որը յեկել եր ուրյագնիկը, սեղանատանը գրում եյին ինչ վոր մի թուղթ։ Մայրը լաց եր լինում։

Բայց ահա պատշգամբի մոտ կանգ առավ մի սահնակ, և յերեք սպիտակ ձիերից գոլորշի յեր բարձրանում։

— Վոլոդյան յեկավ, — բղավեց մեկը բակում։

— Վոլոդիչկան յեկավ, — կանչեց Նատալյան, ներս վազելով սեղանատուն։

Յեվ Միլորդը հաջեց թափ ձայնով՝ «հաֆ հաֆ» Բանից գուրս յեկավ, վոր տղաներին բռնել եյին քաղաքում, իանութաշարքում (այնտեղն ըանք ման եյին գալիս ու անընդհատ հարց ու փորձ անում, թե վորտեղ կարելի յե գտնել վառող)։ Վոլոդյան, հենց վոր մտավ նախասենյակ, իսկույն հեկեկաց ու ընկապ մոր վզովը։ Աղջկերքը դողդողալով, սարսափած մտածում եյին այն մասին, թե հիմա ինչ պիտի լինի, լսում եյին, թե ինչպես հայրիկը տարավ Վոլոդյային ու Զեչնիցյինին իր առանձնասենյակը և այնտեղ յերկար խոսում եր նրանց հետ։ Մայրիկն ել եր խոսում ու լաց լինում։

— Միթե այդպես կարելի յե, — համոզում եր հայրիկը։ — Սպաված մի արասցե, կիմանան գիմնազիայում, դուրս կանեն։ Իսկ քեզ համար ամսթե, պարոն Զեչնիցյին։ Լավ չե։ Դուք եք դրդնդը, և հուսով եմ, դուք կկըեք ձեր պատիժը ձեր ծնողների



կողմից։ Միթե այդպես կարելի յեւ Դուք վորտե՞ր  
եք գիշերել։


— Կայարանում, — հպարտ պատասխանեց Զե-  
սկից ինը։

Վոլոգյան հետո պառկել եր, և նրա գլխին դը-  
նում ելին քացախով թրջած սրբիչը։ Հեռազիր ու-  
ղարկեցին ինչ վոր տեղ, և մյուս որը յեկավ մի  
տիկին, Զեշեցյինի մայրը, ու տարավ իր վորդուն։

Յերբ Զեշեցյինը գնում եր, նրա գեմքը խիստ  
եր գոռոզ, և աղջկերքին հրաժեշտ տալիս, նա վոչ  
մի խոսք չասաց, միայն վերցրեց Կատյայի տետ-  
րակն ու գրեց իբրև հիշատակ։

«Մոնահումո Բազեյի Ճիրան»։






PROB

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002307



ԳԻՒՅ ՅՈ ԿՈԴ.

A II  
24138

064.

А.П. ЧЕХОВ  
МАЛЬЧИКИ  
ГИЗ АССР ЕРЕВАН 1937